ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/61

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.03.2020թ. թիվ 26/26-1/4398-2020 գրությամբ «Գրինլայթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/874-2020 գրության հիման վրա, 20.03.2020թ. թիվ 26/26-1/4398-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Գրինլայթ» ՍՊԸ-ի (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Գրինլայթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գրինլայթ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Գրինլայթ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/61 ընթացակարգի շրջանակներում 27.03.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/874-2020 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Գրինլայթ» ՍՊԸ-ի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին միակողմանի մասնակի լուծել է՝ «Գրինլայթ» ՍՊԸ-ի հետ 17.05.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/25-2 գնման պայմանագրին կից N 2 համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնելով, որ վերոնշյալ համաձայնագրի լուծման վերաբերյալ գրությունը 18.03.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/61 ընթացակարգի շրջանակներում 27.03.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Գրինլայթ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է «ԲՄԱՊՁԲ-7/25-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Գրինլայթ» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 2):

2. ՀՀ պաշտպանության նախարարության և «Գրինլայթ» ՍՊԸ-ի միջև 02.07.2018թ. կնքվել է 17.05.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/25-2» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության և «Գրինլայթ» ՍՊԸ-ի միջև 26.04.2019թ. կնքվել է 17.05.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/25-2» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 2-ը:

4. «Գրինլայթ» ՍՊԸ-ին ուղղված 17.03.2020թ. թիվ ԴՎԱ/978 ծանուցմամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Գրինլայթ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/25-2» պայմանագրին կից 26.04.2019թ. կնքված N 2 համաձայնագրի (հետայսու նաև՝ Համաձայնագիր) շրջանակներում Ընկերությունը պետք է մատակարարեր՝

- 12 000 հատ վերնաշապիկ՝ երկարաթև, դեղնականաչավուն գույնի, որից չի մատակարարել 2430 հատ,
- 12 000 հատ վերնաշապիկ՝ կարճաթև, դեղնականաչավուն գույնի, որից չի մատակարարել 2620 հատ,

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 18.03.2020թ հրապարակվել է Համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության 19.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/874-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Համաձայն Պայմանագրի 8-րդ կետի 8.1-րդ ենթակետի՝ ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:*** Պայմանագրով

սահմանված ապրանքների մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2018-2020թթ. համաձայնագրերի կնքման միջոցով:

Համաձայն Պայմանագրի 8-րդ կետի 8.5-րդ ենթակետի՝ ***<u>պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:</u>***

Համաձայն Պայմանագրի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով ***<u>պայմանագիրն</u> ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին*** ծանուցումը Գնորդը հրապարակում է <u>www.procurement.am</u> հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ ***<u>Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը</u>***, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Գրինլայթ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է «ԲՄԱՊՁԲ-7/25-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Գրինլայթ» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 2):

ՀՀ պաշտպանության նախարարության և «Գրինլայթ» ՍՊԸ-ի միջև 02.07.2018թ. կնքվել է 17.05.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/25-2» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Գրինլայթ» ՍՊԸ-ի միջև 26.04.2019թ. կնքվել է 17.05.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/25-2» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 2-ը:

«Գրինլայթ» ՍՊԸ-ին ուղղված 17.03.2020թ. թիվ ԴՎԱ/978 ծանուցմամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Գրինլայթ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/25-2» պայմանագրին կից 26.04.2019թ. կնքված N 2 համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը պետք է մատակարարեր՝

- 12 000 հատ վերնաշապիկ՝ երկարաթև, դեղնականաչավուն գույնի, որից չի մատակարարել 2430 հատ,
- 12 000 հատ վերնաշապիկ՝ կարճաթև, դեղնականաչավուն գույնի, որից չի մատակարարել 2620 հատ,

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին ***միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը***:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ անձն արձանագրում է, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը, որի վերաբերյալ ծանուցումը 18.03.2020թ. հրապարակել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Պայմանագրի 2.1.7 ենթակետով սահմանված է Պատվիրատուի կողմից **Պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքը**, մինչդեռ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է 17.05.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/25-2» պայմանագրի հիման վրա Կողմերի միջև կնքված Համաձայնագիրը, որը համաձայն Պայմանագրի 8-րդ կետի 8.5-րդ ենթակետի հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու***

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Համաձայնագրի լուծման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Գրինլայթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.03.2020թ. թիվ 26/26-1/4398-2020 գրությամբ «Գրինլայթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**